


LG 11
479

№

ԼԵՒՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ 1993.

Ք Ն Ա Ր Ե Ր Գ



Օ, էն մարդիկ էն չար մարդիկ, ընկեր ջան,
Արիւն-ախտներ, դա՛ւնդ տու գաս թող կուտան,
Որ մի կուշտ լամ, սր կուշտ սգամ, քեզ պատմեմ,
Ջիւան ջանիս՝ դարդըւ սրտիս տաղն ասեմ...
Օ, էն մարդիկ, էն չար մարդիկ թող կուտան...

ԼԵՒՈՆ ԳՐ.

I Պ Ր Ա Կ.

Լեռ
479



ՄՈՍԿՈՒԱ

Տ Պ Ա Ր Ա Ն Ք. Բ Ա Ր Խ ՈՒ Ի Կ Ա Ր Ե Ա Ն Ի.

1899.

Գ 479-ԱՅ

ՀՔ. 480

* * *

Ահա գիշեր է. լուսնեակ գիշեր.
 Ես նստած եմ քո կողքին,
 Քնքուշ ձեռքդ, սիրուն ընկեր,
 Դու սեղմել ես իմ ձեռքին...

Լռիկ, մնջիկ ինձ ես նայում՝
 Է՛ր եմ հայուած ու մաշուած,
 Է՛ր եմ թօշնել վառ կոկոնում՝
 Դեռ չ'ծլած, չ'ծաղկած...

Մատաղ կեանքս վառ կոկոնում
 Ձեր թառամիլ չ'բացուած՝
 Եթէ խօսքդ, ընկեր սիրուն,
 Լինէր անկեղծ, անձնուրաց...

Եթէ ընդ միշտ մենք ուխտէինք
 Չ'դառնալ մարդկանց խաղաղէք,
 Չան ասէինք, Չան լսէինք...
 Ա՛խ, ապրէինք երջանիկ...

Մոսկուա, 18^{IV}/₂₅96.

Дозволено Цензурою. С-Петербургъ, 2 Марта 1899 года.

Типогр. Х. Бархударяны, Москва, М. Влатоустов. пер., д. Гиршъ.

ՄԱՐԿԻԿ

(Ը Ս Տ Բ Ա Յ Դ Ը Ն Ի)

Սիրոյ և բաղդի տենչերով լեցուն
 Մեր մատաղ սրտերն, այ իմ աննման,
 Երբ որ միասին՝ զուարթ, գեղգեղուն՝
 Աշխարհ մոռացած միմեանց միացան,
 Կարծում էինք թէ՛ թէպէտ և դամբան
 Մենք պէտք է իջնենք անպատճառ մի օր,
 Վերին երկնքում սակայն յաւիտեան
 Անբախտ կըմնանք, անբանկտ, բաղդաւոր ...
 Օ՛, չանցան տարիք, մեր սէրը, անդին,
 Իւր շղթայակապ օղակով հզօր
 Եւ քայքայեցին և բաժանեցին
 Մարդիկ փոքրօգի, մարդիկ կամակոր...

Մոսկուա, 18 $\frac{1}{25}$ 96.

* * *

Յուսակտուր Հայեացքներով
 Ինձ ես նայում, սիրելիս,
 Անմեղութեան այդ զգացմունքով
 Թունաւորում վառ հողիս:

Կասկածների թոյնն է մաշում,
 Գիտեմ, կուրծքդ սիրակէզ.
 Մինչև այսօր չես հաւատում
 Թէ սիրում եմ, պաշտում քեզ...

Կասկածների թոյնն է մաշում
 Եւ իմ հողին, իմ հրեշտակ,
 Մենք երկուսս էլ լուռ ենք տանջւում,
 Բայց... միմեանցից անտեղեակ...

Մոսկուա, 18 $\frac{XII}{20}$ 97.

* * *

(Ը Ս Տ Բ Ա Յ Ռ Ը Ն Ի)

Պատկերդ բռնած զողորմունն ձեռքով՝
 ես յուսահատուած նայում եմ վերան,
 եւ սրտիս խորքից դառն հառաչելով՝
 Ապագայիս վրայ մտածում եմ միայն:

Կանցնեն տեղափոխ կեսնքիս գեղ օրեր.
 Կննջեմ անդարձ, խոր քնով, յաւիտեան,
 եւ ինձ չեն գգուիլ հոգեակի, քո ձեռքեր,
 Մամուռ կբուսնի շերիմիս վերան...

Բայց գոնէ մի օր կասե՞ս քո մտքում
 Թէ կար երբեմն մի թշուառ երգիչ,
 Որ ինձ ջերմագին սիրում էր, պաշտում,
 եւ մեռա՞ւ... այրուած սիրոյ կրակից...

Թիֆլիս, 1892.



Յ Ո Յ Ս Ե Ր Ը

Վարդը կրճքիս,
 Սէրը՝ սրտիս.
 Յոյսեր անհուն
 հոգուս խորքում...



Վարդը կ'թօշնի,
 Սէրը կ'մարի,
 Բայց դուք, յոյսեր,
 Միշտ էք ընկեր...

Մոսկուա, 18¹/₂₆ 98.

* * *

(Ռ Ո Ւ Ս Ե Ր Է Ն Ի Յ)

Քո աչերով ես նայում եմ,
 Եւ քո խելքով մտածում:
 Քո արցունքով արտասւում եմ,
 Եւ քո վշտով վշտանում:

Ես քո հոգով տառապում եմ,
 Քո ցանկութեամբ ցանկանում:
 Քո աղօթքով աղօթում եմ,
 Քո տխրութեամբ միշտ տխրում...

Եւ ապրում եմ ես քո կեանքով,
 Եւ քո կեանքով միշտ տքնում:
 Բայց, սիրելիս, քեզ իմ սիրով
 Ես սիրում եմ ու պաշտում...

Մոսկուա, 18 $\frac{V}{14}$ 93.

* * *

Ձեմ հաւատում ես կենսական
 Փորձանքներին, փոթորիկին,
 Գիտեմ, այնտեղ իմ ապագան
 Ոչ վճռելու զօր չունին...

Ձեմ հաւատում ճակատագրիս,
 Նորա վճռին չեմ նայում:
 Բաղդըս, մահըս, իմ թագուհիս,
 Հայեացքիդ եմ լուկ կարգում...

Մոսկուա, 18 $\frac{IX}{10}$ 97.



Ը Ն Կ Օ Ր Ս

Առաջ եկ, ընկեր, մի քաշուիր անկիւն,
Գործ կայ քեզ համար այս ցաւ աշխարհում:
Շուրջդ արտասուք, հառաչք, վայնասուն,
Որդեկորոյս մօր աղերսն է լաւում..

Առաջ եկ, ընկեր, մի քաշուիր անկիւն,
Եւ այդ անկիւնում մի փնտրիր դու քեզ
Փառաւոր, վսեմ կեանք, վայելչութիւն.
Ունայն է կեանքը, ունայն, վշտակէզ..

Տես, տխուր ներկան, մօտիկ ապագան
Կարօտ են քեզ պէս անկիւնում պահուած
Կարող ոյժերի. դժբա, օրհասական
Քանի սեւ ժամեր դեռ վրայ չեն հասած:

Եւ կգան ժամեր խորին տրտմութեան,
Նոր զուցէ այն ժամ դու կուզես, ընկեր,
Ձեռք զարկել գործի. կ'ուշանաս. այն ժամ
Գործի տեղ դու լոկ կ'թափես արցունքներ..

Մոսկուա, 1898.

*
* * *

Ոսկի, արծաթ, հարստութիւն,
Գանձ, մարգարիտ ի՞նչ կանեմ,
Եթէ սիրող սրտիդ խորքում
Ես, սիրելիս, տեղ չունեմ..

Մոսկուա, 18- $\frac{x}{9}$ -97.



* * *

(ԱԼԷՔՍԱՆԴՐ Ե ԱՏՈՒՐԵԱՆԻՆ)

Յուզուած ամպերը երկնակամարում
Քուռում են, գոչում:

Յուզուած մտքերը պօէտի կրծքում
Վառուում, աղմկում:..

Ահա, անձրև է երկնքից թափուում,
Ջրում է գետին:

Յուզուած մտքերը իրէալ են ծնում,
Զարթեցնում քնածին:

Կոշտ հողն անձրևը տես, պարարտացրեց,
Ցնծում են արտեր,

Իզէալը մարդկանց միտքը վերածնեց,
Քակում են կապեր:..

Մոսկուա, 1896.



ՆՈՐԱ ԱԼԲՈՄՈՒՄ

Դու ուզում ես քո ալբոմում
Մի բան զըրեմ, աննման,
Որ իբրև թէ դու իմ անուն
Զրմոռանաս մինչ դամբան:

Քանց ալբոմից թերթիկներում
Դու անունս պիտ' պահես,
Զէ՞ որ մատաղ սրտից խորքում
Աւելի՛ մեծ տեղ ունես:..

Մոսկուա, 1896.



* * *

(Գ. Ա. . . - ին)

Տես, կէս զիշեր է. խուլ, խաւար զիշեր.
 Լուսին ու աստղեր ամպերի զրկում
 Լուռ մըրափում են, սիրելի ընկեր,
 Տես, թէ ինչպիսի՜ խաւար է տիրում:

Լուռ է ամեն ինչ... ամեն բան նիրհած.
 Նիրհում է նաև ամբողջ բնութիւն.
 Միայն երբեմն՝ քամին ձայնակցած
 Գետի վշշոցին՝ տերևն է շարժում:..

Այդպէս խաւար է նաև կեանքը մեր.
 Մտքեր ու զգացմունք թմրած, խարխափած,
 Լուռ մըրափում են, սիրելի ընկեր,
 Ողջը անշարժ է, ողջ ննջի մատնած:..

Բայց... կանցնի զիշեր և առաւօտեան
 Ոսկեշող արեղ կփայլի. աշխարհում
 Ողջը կ'զարթի... բայց ե՞րբ կըշողան
 Այդպէս արեգներ նաև մեր կեանքում:..

Մոսկուա, 1898.

* * *

Գեղեցկութեան դու թագուհի,
 Անմեղութեան սուրբ տիպար.
 Տիեզերքի դու տիրուհի,
 Անմահ սիրոյ յայտարար,

Որպէս ալ վարդ դու ծաղկում ես,
 Որպէս լուսին փայլփայլում:
 Շատին դու կեանք, բողբոջ ձօնում ես,
 Շատին շերիմ պատրաստում:..

Այստեղ ես քեզ, քեզ եմ դիմում,
 Դու իմ բաղդ, ինձ մխիթար,
 Ասան, արգեօք ի՞նչ ես վճռում,
 Դու, աննման ինձ համար:..

Մոսկուա, 28 $\frac{XII}{2}$ 97.

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Օ՛ր, թող վարակիչ հիւանդութեան պէս
 Զարամիտ բազըր մաշէ իմ հոգին,
 Տղբուկի նման ծծէ սիրակէզ
 Կրճքիս արիւնը մինչև խոր շերիմ:

Թ՛ող ողջը մնայլն փոխուի ինձ համար.
 Սև ու մութ օրեր պատեն իմ գլխին...
 ...Սուրբ ճշմարտութեան անմահ գաղափար
 Ձէ՛ լոյս ես սփռում միշտ դէպ՝ իմ ուղին...

Ձէ՛ նուիրուած եմ քո՛ դրօշը պարզած
 Իմ հայրենիքին, իմ թշուառ ազգին,
 Անձնական շահը ոտնակոխ արած՝
 Ձէ՛ թև եմ տուել հանուրի շահին...

Ինչքան էլ բազդից լինեմ հալածուած,
 Ինչքան էլ կեանքը մաշէ իմ հոգին,
 Հաւատս պայծառ, կամքս անձնուրաց,
 Ես առաջ կերթամ իմ ընտրած ուղին...

Մոսկուա, 1898.



ՄԵՆԱԿ ԵՄ

Երբ աստղեր, լուսին կապոյտ երկնքում,
 Լայնարձակ, անշէջ եթերի գրկին՝
 Հրեշտակների հետ սէր են գեղգեղում,
 Յառելով աչերն նիրհող մայր երկրին.
 Երբ դեղ բնութիւնն սիրատենչ զարնան
 Հեշտաշունչ վարդի ցողառատ գրկին,
 Ձերմ սիրահարի տենչով անսահման՝
 Լուռ ունկրնդրում է սոխակի երգին,
 Այդ ժամ աչերս դարձնում եմ դէպ քեզ,
 Լցուած սուրբ սիրոյ զգացմունքով անհուն.
 Արդեօք ինձ համար դու սէր պահե՞լ ես,
 Որ յառաջ տանեմ խաչս աննկուն...
 Թէ՛ պսպէս կանգնած ինձ պէտք է թողնես,
 Մենակ... յուսահատ, բաղձանքներ կրճքում...
 Ասա, սիրելիս, ասա, սէր ունե՞ս,
 Մենակ եմ... խաչս ծանրը է թուում...

Մոսկուա, 18 $\frac{XI}{5-6}$ 97.



* * *


Ա՛խ, շատ մութն է, մութն ու խաւար
 Երկնակամարն այս գիշեր.
 Տխուր, մռայլ ու անհամար
 Կուտակուած են սև ամպեր:

Անդորրութիւն չորս կողմ՝ պատած՝
 Լուռ է համայն բնութիւն.
 Լուսին, ասղտեր խոր քուն մտած՝
 Քնած է նաև մարդկութիւն. . .

Օ՛, ցաւատանջ, թշուառ, անտուն,
 Բաղդաշալած իմ եղբայր,
 Քո սև օրն ես ողբում, սգում,
 Լալիս խաւար այս մռայլ. . .

Մի՛ վհատիր. խաւար գիշեր
 Կանայտանայ ամպերում.
 Յաղթող լուսոյ վառ ճաճանչներ
 Կ'ցոլան նաև քո երկրում. . .

Մոսկուա, 1896.



* * *

Դէ, մնաս բարեաւ, անգին թագուհիս,
 Սյժմ կաշխատեմ ես քեզ մոռանալ.
 Բոցավառ սերը պատանի կրծքիս՝
 Էլ չն առկայծուիլ, յուզուիլ, փրփրալ. . .

Նա որպէս պանդուխտ, որպէս տարագիր
 Սյժմ կհանդչի պատանուս կրծքում,
 Եւ վայելչութեան իբրև անձանձիր՝
 Սյդ վայելչութիւնն կփնտրի շիրմում. . .

Եւ մինչև շիրիմ սերս ոչ դքի
 Ձէ նուիրուելու, հաւատան, հոգեակ.
 Ո՞վ կ'հասկանայ սերս դեռատի,—
 Աւելի լաւ է ծածկիլ հողի տակ. . .

Մոսկուա, 18^X/₂₁ 98.

* * *

(Օր. չ. Ե... - Ին).

Միմեանցից հեռու, անջատուած, անել,
Սար, ձոր, լիւռներ են, հոգեակ, մեղ բաժնում:
Բայց թէ ուզում ենք միմեանց բան ասել,
Մենք տեսնում ենք վառ երազներում:

Թէ սիրոյդ անուշ մեղեդին կուզես
Տնչեցնել անվախ ազատ ականջիս,
Սիրաբուրդի շուրթերդ լուռ մտայնում ես
Թէպէտ ջախջախուած՝ բայց սիրող կրճքիս:

Թէ դուռբաց բերնի կեղծիք, բամբասանք
Միքտո՞ք փոխում են, դէմքդ խոժոռած
Կանգնում ես հեռու, բարկացիտ հայեացք
Սրձակած վերաս՝ նայում ես խոցուած...:

է, գոնէ այդ էլ հոգուս մխիթար,
Գոնէ լոկ դէմքդ է վշտերս սփոփում:
Լինեմ պաշտելիդ, թէ լինեմ օտար՝
Սորանից յետոյ՝ ինձ նոյնն է թւում...:

Մոսկուա, 28^{XII}/₉97.

* * *

Մի լար անգին, մի լար հոգիս, արցունքներդ չ'տեսնեմ.
Այլ թշերիդ, սև աչերիդ թախիժ ու վիշտ չ'պատեն.
Արցունքները վնաս կրտան սիրահայեաց աչերիդ,
Թախիժ, վշտեր կրկնորտակեն ջերմ տեսչերը վառ կրճքիդ...:

Գիտեմ վիշտդ, գիտեմ ցաւդ, նորա մեր կեանք են ողբում,
Նորա արեան ու շղթայի անգուլթ փայլն են ցոյց հանում:
Բայց վշտերով, արցունքներով երբ են եկել ու բացուել,
Արդարութեան ձայնն ու խաչը, երբ են խոց ու վէրք
բուժուել...:

Քանի՜ դարեր այդ արցունքով և ողբացին և լացին,
Քանի՜ դարեր այդ վշտերով կեանք մաշեցին, տանջուեցին,
Բայց ոչ, հոգիս, դեռ չեն լուում Մարգարէի վե՛հ խօսքեր՝
«Ինձ մօտ եկէք, ձեզ կ'փրկեմ վաստակեցուցե՛ք, ճշմարտե՛ք»:

Մի լար, անգին, մի լար, հոգիս, արցունքներդ մի թախիժ
Գիտես, այդպէս վէրք ու խոցի դեղ ու դարմանք գիտե՛լից
Տուր ինձ ձեռքդ, ես էլ քեզ պէս՝ քո ցաւերով եմ անուշում
Տուր ինձ ձեռքդ, մենք միասին գուցէ՛ դարման ենք գտնում...:

Կունցիո ամառանոց, 18^{VII}/₂₈97.

* * *

Վերը ամպեր են զոռում ու զոչում,
 Երկինքը խաւար, խուլ մէզ է պատել.
 Ցածը քամին է փչում, շառաչում,
 Երկիրը մռայլ փոթորիով ծածկել...

Մրրիկ, փոթորիկ չորս կողմը պատած՝
 Ողջ բնութիւնն է գերուել տարերքին,
 Օ՛, ի՞նչ պէտք է դայ, ով Ստեղծող Աստուած,
 Անբազդ, ցաւատանջ մայր երկրի զլսին...

Կրնեցե՛ս ամառանոց, 18^{VI}₂₈97.



* * *

Դարձեալ սիրում եմ, դարձեալ տանջում եմ,
 Բայց դու չզիտես.
 Դարձեալ իմ սիրող կուրծքը բացում եմ,
 Քեզ համար անտես...
 Կուզես ինձ սիրիք, կուզես ինձ ատիր,
 Ես քեզ պիտ' սիրեմ:
 Եւ հաւատարիմ սիրոյս անձաձիր՝
 Գերեզման կիջնեմ: . .

Մոսկուա, 18^I₇98.



ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

Իմ սիրածին ես ասացի՝
— Ի՞նչ ես ժպտում, աննման—

Բայց նորանից չլսեցի
Ես խօսքերիս պատասխան:

Փթթող վարդին աղերսեցի՝
— Ո՞ւմ համար ես դու ծաղկում,
Մտայ պարտեզ ու նայեցի՝
Այլ թուշ վարդն էր թառամում:

Լուսին, աստղեր ձեզ նայեցի՝
Ամպի տակ է՞ր թաք կայաք,
Մրրիկ, որոտ լոկ լսեցի,
Երկինք պատեց թուխպ անյազ...

Մոսկոա, 18 $\frac{XI}{15}$ 97.



X-Ի ԼՈՒՍԱՆԵԱՐԻ ԱՌԱՋ


Օ՛, մի՞թէ մի օր աչերդ այդ սիրուն՝
Ուր կախարդական աշխարհ է ցոլում,
Որ հրդեհում են սիրտը քար մարդկան՝
Օ՛, պէտք է մի օր, մի օր հող դառնան...

Օ՛, մի՞թէ մի օր կուրծքդ այդ փափկասուն,
Ուր կեանքի առատ աղբիւր է վաղում,
Որ բարախում է սիրով կուսական...
Օ՛, պէտք է մի օր մոնէ սառ դամբան...

Օ՛, մի՞թէ մի օր ցուրտ, սառը հողում
Պիտ՝ ամփոփեն դիպ, ու յաւէտ ննջես...
Եւ ճճի որդերն իրենց ստամոքսում
Քեզ տեղ պիտի տան, դու պիտի կլանուես...

Օ՛, մի՞թէ մի օր և պիտ՝ մոռացուես...
Ու յաւէտ կորչես, իմ անզին զոհար,
Իբրև ոչ ծնուած և ոչ ապրած ես,
Եւ այս սնափառ կեանքն է քեզ օտար...

Մոսկոա, 18 $\frac{III}{19}$ 98.



* * *


Սիրտ իմ, սիրտ իմ, ի՞նչու այգպէս
Յուսահատուած, հէգ տրտում՝
Կեանքի առաջ խուլ, վշտակէզ՝
Խորտակուում ես ու ընկձուում:

Սպասիր, սիրտ իմ, դեռ քեզ համար
Կայ մի սուրբ սիրտ հարազատ...
Նա քո շաւղին մուսյլ, խաւար՝
Լոյս կցողէ սիրառատ...

Եւ քանի որ սիրտն այդ դեռ կայ,
Դեռ շնչում է անմեկին,
Սիրտ իմ, սիրտ իմ, տանջւի՛ր, յուսա՛,
Սպասիր դարնան արեգին. . .

Բայց երբ թօշնի սիրտն այդ յաւէտ,
Յաւէտ մարէ, օ, սիրտ իմ,
Նոր թող այն ժամ դու էլ նրա հետ
Հանգչես, մանես խոր շիրիմ. . .

Մոսկուա, 18 $\frac{XI}{10}$ 98.




* * *

Երանի՛ նրան, որի կրծքին դու
Հերարձակ գլուխդ մի օր կսեղմես,
Եւ քո բոցավառ, վարդ շրթունքներու
Ձերմ՝ դուանքներին արժանի կանես...

Որի աչերին աչերոդ յառած՝
Սիրոյդ մեղեդին ազատ կձայնես,
Եւ վայելչութեան դուռը բաց արած՝
Ամբողջ աշխարհը դրախտի կ'փոխես...

Վայ ինձ, որ այսօր որպէս տարազիր,
Մենակ, յուսահատ սիրում եմ, տանջում...
Եւ չըսելով մի խօսք համակիր՝
Ամբողջ աշխարհը դրժոխք եմ կարծում...

Մոսկուա, 18 $\frac{VII}{3}$ 98.



* * *

Հեռ՛ւ, Հեռ՛ւ դուք, կենսական
 Անբոյր, սնոտի, սին յոյսեր.
 Հեռ՛ւ ոսկի, զարդ չարական,
 Փառք ու պատիւ, պալատներ. . .

Դուք չէք զրաւիլ, չէք կաշկանդիլ
 Միտքս ու հոգիս մինչ՛ դամբան.
 Ձեզ համար չեմ ապրիլ շնչել
 Վառ յոյսերով անսահման. . .

Սիրածարաւ այս սրտիս մէջ,
 Այս վառվռուն կրծքիս տակ
 Որպիտի տենչ իղձ վառ, անշէջ,
 Որպիտի՛ սուրբ նպատակ. . .

Եւ այդ բոլորն պիտ՛ նուիրեմ
 Բազմաչարչար իմ ազգին,
 Նորա համար պիտի լարեմ
 Թարմ ոյժերս սիրազին. . .

Եւ թէ մեռնեմ մեն-խեղճութեան
 Մէջ մաշկով վառ հոգիս,
 Ինձ այդ փոյթ չէ, անդաւաճան
 Ես սիրել կմ հայրենիս. . .

Մոսկուա, 18 $\frac{XI}{9}$ 96.



ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԵՐԳ

Մարգարիտը արքայական
Պալատումն էր փայլփայլում:
Վարդը՝ միակ սիրոյ նշան՝
Կուսի կուրծքն էր զարդարում:

Հասաւ ձմեռ, վարդը սիրուն
Կրծքիցն ընկաւ, թառամեց,
Մարգարիտը՝ վառ ու փայլուն,
Այնտեղ երկա՛ր դեռ ապրեց...

Վարդի նման, մատաղ երգիչ
Վառ արեւը կ'թօշնի,
Մարգարտի նման երգո՞ղ ոգելից
Այստեղ երկա՛ր դեռ կապրի...

Թեֆլիս, 1892.



* * *

Նա աղջեկ էր. սիրտն ու հոգին
Անհոգ, զուարթ, պարզ, պայծառ.
Խինդ ու ժպիտ անուշ դէմքին,
Նուրբ շուրթերը սիրավառ:

Կեանքի անուշ անուրջներում,
Փարթամ հօր տան յարկի տակ,
Գոռած, շոյուած սիրոյ զրկում՝
Վարդ էր տեսնում բովանդակ...

Այժմ՝ մայր է. սիրտն ու հոգին
Դառը վիշտն է տոչորում.
Դէմքը տխուր. պտուղը զրկին
Օրօրում է ու նիրհում...

Մոսկուա, 1896.



* * *

Իմ սիրածին վարդ ձօնեցի,
 Վարդի փոխան սէր խնդրեցի.
 Վարդը առաւ, կրճքին հպեց,
 Սիրոյ մասին ոչինչ չասեց:

Անցան օրեր. վարդը թօշնեց,
 Յուրա ու բուքը աշխարհ պատեց.
 Զմբան տխուր, ցուրտ օրերին
 Նա խօսում է սիրոյ մասին...

Մոսկուա, 18- $\frac{1}{1}$ 98.



Մ Ե Ռ Ա Ի...

Վարդը թօշնեց, տերևն ընկաւ.
 Մութ է, խաւար տխրագին.
 Յուրա է, բուք է, քամին հասաւ
 Հարուածեկը աշխարհին...

Կգայ գարուն. վարդ ու տիրև
 Կգարդարունն, կփթթան,
 Հոփն ու զովը նորից բարև
 Զարթած երկրին կ'կարդան:

Մեռաւ սէրս. զնայ, կորաւ...
 Նրան թաղեցին վշտերում..
 Գարունն եկաւ, գարունն անցաւ,
 Բայց, ախ, նա է՞ր չէ՞ յառնում..

Մոսկուա, 18- $\frac{IV}{15}$ 97.



* * *

I.

Նա աշխարհ եկաւ ազատ զգացմունքի
 Զինուոր կոչուելու...
 Բռնի, ստորաքարշ, ըստօր կրքերի
 Շիրիմ փօրելու...

II.

Նա մտաւ մի վանք, արեղայ դարձաւ,
 Աղօթքի տրուեց.
 Բայց թէ աշխարհից ինչո՞ւ հեռացաւ,
 Ոչ ոքի չ'ասեց...

Մոսկուա, 18 $\frac{XI}{4}$ 97.

* * *

Խաղաղ գիշեր է. պայծառ երկնքում
 Լուսին ու աստղեր փայլում են, վառուում:
 Լուռ է չորս կողմը. քնոյ դիցուհին
 Ողջը ծածկել է թւերի տակին...

Լուռ է չորս կողմը. լնու, հանդի՛ստ, խաղաղ,
 Միայն հանդիստ չէ իմ հոգին մատաղ...
 Միայն ես անքուն, անհանդիստ, տրտում՝
 Վիշտն ու թախիծը կուրծքս են տոչորում...

Ո՞վ գիտէ այժմ, այս իսկ բոպէին՝
 Երբ դառը վիշտն է ճնշում իմ հոգին,
 Երբ քո մասին եմ մտածում, խորհում,
 Անգին թագուհիս, դու ի՞նչ ես անում...

Արդեօք դու էլ ես ինձ նման յուզուած,
 Ինձ նման կարօտ... անքուն, վշտացած...
 Թէ՞ ինչպէս որ այս գիշերն է խաղաղ,
 Խաղաղ է նաև քո հոգին մատաղ...

Օ՛, անգին զոհար, ինչպէս էլ լինես,
 Իմ սիրող սրտում դու մի՛շտ տեղ ունես...

Մոսկուա, 18 $\frac{X}{2}$ 98.


ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳ

Էլ մի սպասիր որ քեզ համար
 Երգեմ գարուն, վարդ ու սեր,
 Կապոյտ երկինք, սիրտ սիրահար,
 Մրայօն կուսի զոյգ աչեր. . .

Ոչ, այս կեանքը ցաւ է, տանջանք,
 Նա սիրոյ երգ չէ խնդրում:
 Այստեղ կարիք, լաց, հառաչանք,
 Վշտի ծովն է փոթորկում. . .

Այժմ այլ մտքեր ինձ յուզում են,
 Մտքեր՝ դէպ՝ սուրբ գործ մղող. . .
 Այլ զգացմունքներ ինձ տանջում են,
 Այս կեանքի դէմ բողբոջ. . .

Մոսկուա, 18 $\frac{XI}{27}$ -98.



32

ԳՐԵՆ Է 15 ԿՈՊ.

Այս քաղաքում է գտնվում Երևանի
և Կոմիտասի հիմնադրամի կազմակերպչները

Երևանի

Կոմիտասի

Երևանի

Կոմիտասի

« Ազգային գրադարան



NL0248482

